Digitally signed by GHAZARYAN HOVHANNES 1404750070
Date: 2023.11.15 14:50:39 AMT

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/37199/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԸ
ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15 նոյեմբերի 2023 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, նախագահությամբ դատավոր Հովհաննես Ղազարյանի, ծանոթանալով ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ «ԱՐԱՋԵՆ» Հ/Ձ ՍՊ ընկերության ընդդեմ Ջրային կոմիտեի՝ թիվ «ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.10.2023 թվականի նիստի թիվ 4 արձանագրությամբ ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ «ԱՐԱՋԵՆ» Հ/Ձ ՍՊ ընկերության հայտը 1-ին չափաբաժնի մասով մերժելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումին և կից փաստաթղթերին, քննարկելով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

07.11.2023թ.-ին ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում մուտքագրվել է ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ «ԱՐԱՋԵՆ» Հ/Ձ ՍՊ ընկերության անունից ներկայացված հայցադիմումն ընդդեմ Ջրային կոմիտեի՝ թիվ «ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.10.2023 թվականի նիստի թիվ 4 արձանագրությամբ ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ «ԱՐԱՋԵՆ» Հ/Ձ ՍՊ ընկերության հայտը 1-ին չափաբաժնի մասով մերժելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու պահանջով:

Դատավորի աշխատակազմին գործը հանձնվել է 10.11.2023թ.-ին:

Դատարանը փաստում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, նույն օրենսգրքի 24-րդ հոդվածի 3.1-րդ մասով և 27.2 գլխով սահմանված կանոնների պահպանմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Հաշվի առնելով այն, որ հայցադիմումը վարույթ ընդունելու պահի դրությամբ օրենքով սահմանված բացառություններ առկա չեն, Դատարանը գտնում է, որ գործը պետք է քննել գրավոր ընթացակարգով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: (…):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետները հաշվարկվում են տարիներով, ամիսներով, շաբաթներով և օրերով: Օրերով հաշվարկվող ժամկետներում չեն ներառվում օրենսդրությամբ նախատեսված ոչ աշխատանքային օրերը:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով, նույն օրենսգրքի 27.2 գլխի կանոններով, Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1/. ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ «ԱՐԱՋԵՆ» Հ/Ձ ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ Ջրային կոմիտեի՝ թիվ «ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.10.2023 թվականի նիստի թիվ 4 արձանագրությամբ ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ «ԱՐԱՋԵՆ» Հ/Ձ ՍՊ ընկերության հայտը 1-ին չափաբաժնի մասով մերժելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել Դատարանի վարույթ:

2/. Գործը քննել գրավոր ընթացակարգով՝ առանց դատական նիստ հրավիրելու:

3/. Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2023 թվականի դեկտեմբերի 27-ին «DataLex» դատական տեղեկատվական համակարգի միջոցով (պաշտոնական կայքը՝ datalex.am):

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ՝ Հովհաննես Ղազարյան